



## ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

**«ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿԿՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ**

Օրենքը կարգավորում է կազմակերպությունների և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) համար հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու և արտոնությունների կիրառման հետ կապված հարաբերությունները:

| Ում վրա է տարածվում օրենքի գործողությունը  | Ինչ արտոնություն է նախատեսված   |
|--|---|
| <p>Օրենքի գործողությունը տարածվում է՝</p> <p>1) եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության (ապահովության) վճարների նվազագույն գումարների վճարման պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի (այդ թվում՝ մինչև օրենքն ուժի մեջ մտնելը որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումից հանված ֆիզիկական անձանց) և նուտարների վրա.</p>  | <p>Նշված անձինք՝</p> <p>1) ազատվում են մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների հաշվարկված և չվճարված պարտավորությունների (այդ թվում՝ նվազագույն գումարների նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի, տուգանքների) գումարների վճարումից.</p> <p>2) ազատվում են 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովագրության (ապահովության) վճարների նվազագույն գումարների (այդ թվում՝ հաշվարկված և չվճարված տույժերի, տուգանքների) վճարումից.</p> <p>3) արտոնությանը վերաբերող հաշվետու ժամանակաշրջանների համար պարտադիր սոցիալական ապահովագրության (ապահովության) վճարների և եկամտահարկի գծով տարեկան եկամուտների մասին հայտարարագրեր չեն ներկայացնում:</p> |
| <p>Օրենքի գործողությունը տարածվում է՝</p> <p>2) «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական վճարների գծով օրենքով սահմանված ժամկետներում վճարումները չկատարելու համար հաշվարկված տույժերի պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի, նուտարների, ինքնազբաղված անձանց և հարկային գործակալի պարտավորությունից ազատված հարկ վճարողից եկամուտ ստացած ֆիզիկական անձանց (այդ եկամուտների մասով) վրա.</p> | <p>Նշված անձինք ազատվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով իրենց համար սահմանված սոցիալական վճարների գծով օրենքով սահմանված ժամկետներում վճարումները չկատարելու համար հաշվարկված (հաշվարկման ենթակա) տույժերի վճարումից:</p>  |
| <p>Օրենքի գործողությունը տարածվում է՝</p> <p>3) մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերին համապատասխան</p>   | <p>Նշված ֆիզիկական անձինք ազատվում են մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ իրականացրած՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և (կամ) «բ» ենթակետերին համապատասխան ապրանքի մատակարարում</p>  |

|  |   |
|--|---|
| <p>ապրանքի մատակարարում համարվող գործարքներ իրականացրած (տես ստորև ներկայացված քաղվածքը)՝ մինչև այդ օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություններ ունեցող ֆիզիկական անձանց վրա.</p>   | <p>համարվող գործարքների համար հաշվարկված և չվճարված տույժերի և տուգանքների վճարումից, եթե օրենքն ուժի մեջ մտնելուց հետո (ուժի մեջ է մտել 31.12.2016թ.)՝ 90 աշխատանքային օրվա ընթացքում, կամ մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը կատարել են հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարումը:</p>  |
| <p>Օրենքի գործողությունը տարածվում է՝<br/>4) մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-ին հոդվածին համապատասխան գույքի վարձակալության գործարքներ իրականացրած և ԱԱՀ-ի և (կամ) «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ եկամտային հարկի վճարման պարտավորություն ունեցող ֆիզիկական անձանց վրա.</p> | <p>Նշված ֆիզիկական անձինք ազատվում են մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3.1-ին հոդվածին համապատասխան գույքի վարձակալության գործարքների համար և (կամ) «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ հաշվարկված եկամտային հարկի գծով հաշվարկված և չվճարված տույժերի և տուգանքների վճարումից, եթե օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 աշխատանքային օրվա ընթացքում, կամ մինչև օրենքն ուժի մեջ մտնելը կատարել են հաշվարկված ավելացված արժեքի հարկի և (կամ) եկամտային հարկի համապատասխան գումարների վճարումը: Նույն հոդվածի դրույթները՝ ԱԱՀ-ի գումարների մասով հաշվարկված տուգանքների և տույժերի մասով, կիրառվում են այն գույքի վարձակալության գործարքների մասով, որի վարձակալ է հանդիսանում անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձը կամ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մասնաճյուղ չունեցող օտարերկրյա իրավաբանական անձը:</p> |
| <p>Օրենքի գործողությունը տարածվում է՝<br/>5) մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար օրենքն ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված կարգով և դեպքերում հարկային մարմին ճշտված կամ առաջին անգամ ներկայացվող հարկային հաշվարկներ ներկայացրած կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վրա:</p>   | <p>Նշված անձինք ազատվում են մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված կարգով և դեպքերում հարկային մարմին ներկայացված ճշտված կամ առաջին անգամ ներկայացվող հարկային հաշվարկներով առաջացած հարկի լրացուցիչ գումարների նկատմամբ հաշվարկվող և վճարման ենթակա տույժերի և տուգանքների վճարումից, եթե այդ ժամանակաշրջանների համար ճշտված կամ առաջին անգամ ներկայացվող հարկային հաշվարկը ներկայացվում և հաշվարկված հարկերի գումարների վճարումը կատարվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 աշխատանքային օրվա ընթացքում:</p>  |

Օրենքով սահմանված արտոնություններից օգտվող անձինք արտոնություններին վերաբերող հաշվետու ժամանակաշրջանների համար պարտադիր սոցիալական ապահովագրության (ապահովության) վճարների և հարկային օրենսդրության պահանջները խախտելու համար այդ արտոնությունների մասով չեն ենթարկվում պատասխանատվության, իսկ հարուցված վարույթները ենթակա են կարճման:

Հարկային մարմնի կողմից վերահսկվող՝ սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված եկամուտների մասով առաջացած պարտավորությունների բռնագանձման կամ սնանկության վերաբերյալ դատարաններում գտնվող հայցերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացված կատարողական թերթերը բավարարվում են պարտատիրոջ (լիազորված մարմնի) կողմից սույն օրենքով սահմանված կարգով վերահաշվարկված հայցապահանջի (պահանջի) չափով:

**Քաղվածք**

**«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս**

ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) է համարվում, մասնավորապես, ապրանքների մատակարարումը, իսկ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարումը,

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում: